ԱԴՐԲԵՋԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ս.

Վրաստանի խորհրդարանը 2011 թ. դեկտեմբերի 23-ին կողմ քվեարկեց երկրի նոր ազգային անվտանգության հայեցակարգին, որը եկավ փոխարինելու 2005 թ. «Վարդերի հեղափոխության» ընթացքում մշակվածին: Փաստաթուղթը լայնորեն քննարկվել է հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և արտասահմանյան գործընկերների շրջանում[1]: Եթե Վրաստանի նախկին ազգային անվտանգության հայեցակարգում Վրաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները բնութագրվում էին որպես գործընկերային, ապա նոր հաստատվածում դրանք ներկայացվում են որպես ռազմավարական գործընկերություն: Էներգետիկ, տրանսպորտային և հեռահաղորդակցության ոլորտներում իրականացվող համատեղ ծրագրերը ծանրակշիռ գործոններ են այդ հարաբերությունները բնութագրելու և հետագա զարգացումները կանխատեսելու համար: Որպես հիշեցում նշենք, որ Ադրբեջանի և Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ. նոյեմբերի 18-ին: Այս համատեքստում ներկայացնում ենք Վրաստան–Ադրբեջան երկկողմ հարաբերությունների զարգացումը և հիմնական ուղղությունները: Դրանք են՝

1. քաղաքական.

2. երկկողմ առևտրային հարաբերություններ.

3. էներգետիկ համալիր.

4. տրանսպորտ:

1. **Քաղաքական** *առումով Վրաստանի և Ադրբեջանի միջև ակտիվ երկխոսություն է ընթանում քաղաքականության և անվտանգության, ինչպես նաև եվրոատլանտյան կառույցներին ինտեգրվելու հարցերի շուրջ:*

Քաղաքական երկխոսությունն ամրապնդվում է նաև փոխայցելություններով, որոնց ընթացքում հնչում են հայտարարություններ երկկողմ հարաբերությունների համար նոր ձևաչափ սահմանելու մասին: Նման այցելություններից մեկի ժամանակ Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին առաջ քաշեց մի գաղափար, համաձայն որի, Վրաստանը և Ադրբեջանը պետք է անցնեն համադաշնային հարաբերությունների[2]: Որոշ ժամանակ անց այդ նույն գաղափարը հնչեց միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում ու ստացավ իր հետագա զարգացումը: Եթե Վրաստանի նախագահը խոսում էր ընդհանուր դրույթների մասին, ապա

---

[1] *Տե՛ս National Security Concept of Georgia, 2011.*

[2] *Տե՛ս http://www.messenger.com.ge/issues/2177_august_24_2010/2177_edit.html*

նույն երկրի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ն. Քալանդաձեն Հայաստանում տեղակայված Ռուսաստանի զորախմբերի տեղակայումը 49 տարով երկարաձգելու մասին պայմանագիրը ստորագրելուց հետո հայտարարեց համապատասխան իրավական ակտերի մշակման մասին[3]:

Վրաստանի նախագահի հաջորդ հիշարժան հայտարարությունը հնչեց Ադրբեջանի Միլի-մեջլիսում, որտեղ նա մատնանշեց, որ վրաց-ադրբեջանական հարաբերություններն Ալիևի ղեկավարության ընթացքում ամրապնդվել են ավելի, քան երբևէ, և երկու երկրների կառավարությունները նույնատիպ պատկերացում ունեն տարածաշրջանի ապագայի վերաբերյալ: Իսկ ապագան, ըստ Վրաստանի նախագահի, Եվրոպական Միությունը և ՆԱՏՕ-ն են[4]:

Այս երկու օրինակները (հայտարարությունները) ցայտուն ներկայացնում են քաղաքական երկխոսության մակարդակը և այն հիմնական ուղղությունները, որոնցով ծրագրում են շարժվել երկու երկրների նախագահները (համենայն դեպս, Վրաստանի նախագահը միանշանակ):

Ստորև կներկայացնենք վերոնշյալ երկու երկրների հարաբերություններն առավել հանգամանորեն և ըստ ուղղությունների:

1.1. Պետական սահմանի սահմանագծման և սահմանազատման աշխատանքները: Վրաստանի և Ադրբեջանի հարաբերություններում գոյություն ունեցող ամենակնճռոտ հարցը պետական սահմանի սահմանագծման և սահմանազատման աշխատանքներն են, որոնք ընթանում են 1996 թվականից ի վեր: Ստեղծվել է համատեղ հանձնաժողով: Վրաստանի և Ադրբեջանի ընդհանուր սահմանը 480 կմ է, որից փոխհամաձայնեցվել է 300 կմ-ը: Վրաստանը սահմանակից է Ադրբեջանի յոթ՝ Ղազախի, Աղստաֆի, Թովուզի, Սամուխի, Կախիի, Բալաքյանի և Զաքաթալի շրջանների հետ:

Սահմանագծման և սահմանազատման աշխատանքների հիմնական խոչընդոտը կապված է Դավիթ Գարեջի վանական համալիրի հետ: Խորհրդային ժամանակաշրջանում վանական համալիրը վարչական սահմանով բաժանված էր երկու մասի, որի զգալի մեծ հատվածը հայտնվել էր Վրաստանի տարածքում: Համալիրը գտնվում է Թբիլիսիից 60 կմ դեպի հարավ-արևելք և համարվում է Վրաց ուղղափառ եկեղեցու կարևոր հոգևոր կենտրոններից մեկը: Ադրբեջանցի պատմաբաններն էլ իրենց հերթին հայտարարում են, թե տարածքը պատկանել է իրենց և հանդիսացել կովկասյան ալբանացիների հայրենիքը: Այս տեսակետն առաջին անգամ 2007 թ. հնչեցրել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարը՝ ի պատասխան վրացական կողմի բողոքի, որը վերաբերում էր սահմանային հարցերով բանակցությունների ընթացքում «պատմական բնույթի» տեղեկույթի օգտագործմանը: Սա երկու երկրների պաշտոնյաների միջև տեղի ունեցած բացառիկ հրապարակային բանավեճերից է, քանի որ երկու պետություններն

---

[3] Տե՛ս http://www.inosmi.ru/caucasus/20100906/162721796.html?id=162730012

[4] Տե՛ս http://www.messenger.com.ge/issues/2562_march_9_2012/2562_salome.html

էլ մշտապես ձգտել են ստվեր չցցել իրենց ռազմավարական գործընկերության վրա:

Ադրբեջանի սահմանապահները 2012 թ. մայիսի 6-ին անցագրային կետեր տեղադրեցին վանական համալիրի տարածքում. արգելվեց զբոսաշրջիկների և ուխտագնացների մուտքը հուշարձան: Այս ամենի պատճառով մեծ աղմուկ բարձրացավ Վրաստանում: Քննադատական հայտարարություններով հանդես եկան և՛ քաղաքական կուսակցությունների, և՛ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև հոգևորականները: Որոշում կայացվեց հարցը քննարկել Չիկագոյում (ԱՄՆ) կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ընթացքում՝ երկու երկրների նախագահների մակարդակով: Հանդիպման ընթացքում որոշակի արդյունք չգրանցվեց, բացի բանակցային գործընթացը շարունակելու պայմանավորվածությունից:

Վրաստանը 2006 թ. Ադրբեջանին առաջարկեց փոխարինել վանական համալիրի այդ վիճելի հատվածը սահմանային մեկ այլ՝ համարժեք հատվածով, սակայն Ադրբեջանի պաշտոնյաները հայտարարեցին, որ հողային փոխանակումներն իրենց համար անընդունելի են:

Այս դիմակայության առանցքն այն է (համենայն դեպս՝ Ադրբեջանի համար), որ հուշարձանն ունի գերիշխող և ռազմավարական տեսանկյունից կարևոր դիրք, որը թույլ է տալիս հսկողության տակ պահել ինչպես Վրաստանի, այնպես էլ Ադրբեջանի տարածքները:

1.2. Համագործակցությունը ՆԱՏՕ-ի ձևաչափով: Վրաստանի ազգային անվտանգության քաղաքականության առաջնահերթություններից մեկն ինտեգրումն է եվրոատլանտյան համակարգերին: Վրաստանը Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությանը (այսուհետ՝ ՆԱՏՕ) դիտարկում է որպես եվրոատլանտյան անվտանգության համակարգի հիմք, իսկ իր անդամակցությունն այդ համակարգին՝ ազգային անվտանգության և կայունության երաշխիք[5]: Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հետ կապված, երկրում անց- կացվել է հանրաքվե: Ըստ այդմ՝ ընտրելու իրավունք ունեցող բնակչության մոտ 77%-ը (1,355,328 ձայն) կողմ է քվեարկել անդամակցությանը:

Վրաստանը 2004 թվականից ի վեր զգալի ձեռքբերումներ է գրանցել ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ոլորտում: Բուխարեստի գագաթնաժողովում (2008 թ.) անդամ պետություններն իրենց համաձայնությունը տվեցին Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուն, որը վերահաստատվեց Ստրասբուրգ/Կիելի և Լիսաբոնի գագաթնաժողովների որոշումներով: ՆԱՏՕ-ի նոր ռազմավարական հայեցակարգում (2010 թ.) նշված է, որ կազմակերպությունը պատրաստակամ է շարունակել համագործակցությունը Վրաստանի հետ:

Հյուսիսատլանտյան խորհրդի պատվիրակության և ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի՝ Վրաստան այցի ընթացքում (2011 թ. նոյեմբեր) առաջընթաց արձանագրվեց ՆԱՏՕ-ին անդամակցելու համար սահմանված պահանջները

[5] Տե՛ս National Security Concept of Georgia, 2011.

բավարարելու գործում: Իսկ արդեն Չիկագոյում կայացած գագաթնաժողովից հետո Վրաստանի նախագահը հայտարարեց, որ Վրաստանն ամենայն հավանականությամբ կդառնա կազմակերպության լիարժեք անդամ[6]:

Ադրբեջանի Հանրապետության 2007 թ. ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգում եվրոպական և եվրոատլանտյան կառույցներին ինտեգրումը դիտարկվում է որպես քաղաքական, անվտանգության, տնտեսական ռազմավարական նպատակ, իսկ իր գործընկերությունը՝ ներդրում անվտանգության ապահովման, տնտեսական բարգավաճման և ժողովրդավարության գործում ամբողջ եվրոատլանտյան տարածքով[7]:

Այս ամենն ուշագրավ է նրանով, որ սա միակ փաստաթուղթն է, որտեղ պաշտոնապես նշված է Ադրբեջանի դիրքորոշումը ՆԱՏՕ-ի հանդեպ, քանի որ Ադրբեջանը պաշտոնապես չի հայտարարել վերջինիս անդամակցելու իր մտադրությունների մասին, թեև իր և դաշինքի միջև քննարկվող հարցերի շրջանակը բավական ընդգրկուն է, և ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները բազմիցս գոհունակություն են հայտնել համագործակցության մակարդակի և ձեռքբերումների վերաբերյալ: Անդամակցության մասին հետաքրքիր տեղեկույթ կա հանրահայտ «Վիքիլիքս» վեբկայքում տեղադրված՝ դիվանագիտական փոստից արտահոսած հաղորդագրություններում, որտեղ խոսվում է 2007 թ. Ադրբեջանի պաշտպանության նախարարի և Պենտագոնի ու ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչներից ձևավորած պատվիրակության միջև կայացած հանդիպման մասին: ԱՄՆ պատվիրակությունը գլխավորում էր պաշտպանության քարտուղարի միջազգային անվտանգության հարցերով օգնական Պի-տեր Ռոդմանը: Հանդիպման ընթացքում Ադրբեջանի պաշտպանության նախարարը հայտնել է, որ իրենց երկիրը շահագրգռված է ՆԱՏՕ-ի հետ ակտիվ համագործակցությամբ՝ ընդհուպ լիարժեք անդամակցություն: Այս մասին պաշտոնապես չի հայտարարվում՝ ելնելով որոշակի հանգամանքներից. ադրբեջանական կողմը մասնավորապես զգուշանում է Իրանի և Ռուսաստանի բացասական արձագանքից[8]:

Ադրբեջանը պատրաստ է բավարարել եվրոատլանտյան չափորոշիչները, և սերտ համագործակցությունը դաշինքի և այս պետության միջև դրա արդյունքն է: Ադրբեջանը ռազմական կրթության և զինված ուժերի պատրաստության բնագավառում արդեն իսկ կիրառում է ՆԱՏՕ-ի ստանդարտները. իրականացվում է Ադրբեջանի զինված ուժերի և համակարգային փոփոխությունների համապատասխանեցումը ՆԱՏՕ-ի ստանդարտներին և դրանց հիմքի վրա:

Ադրբեջանը ՆԱՏՕ-ն դիտարկում է որպես լրացուցիչ հարթակ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված հարցերը քննարկելու համար, չնայած «Չմիանալու շարժում»-ին անդամակցելու հանգամանքին: Վերջերս

---

[6] Տե՛ս http://dfwatch.net/saakashvili-promises-georgians-nato-membership-in-2014-2014

[7] Տե՛ս National Security Concept of the Republic of Azerbaijan, 2007.

[8] Տե՛ս http://wikileaks.org/cable/2007/03/07BAKU249.html

Չիկագոյում կայացած գագաթնաժողովի հայտարարության 47-րդ կետը վերաբերում է հարավկովկասյան հանրապետություններին և Մոլդովային, որում արտահայտվում էր կազմակերպության աջակցությունը տարածքային ամբողջականությանը, անկախությանը և ինքնիշխանությանը[9]:

Ադրբեջանը Վրաստանի հետ մասնակցում է ՆԱՏՕ-ի կողմից ղեկավարվող միջազգային օպերացիաներին (Իրաք, Աֆղանստան), իսկ Ղրղզստանի հետ համագործակցությունը դիտարկվում է որպես կոալիցիոն գործողությունների վառելիքի, սննդամթերքի և այլ մատակարարումների հիմնական ուղղություն: Ոչ մահաբեր սարքավորումների, վառելիքի, հանդերձանքի և սննդամթերքի մեկ երրորդը տեղափոխվում է Բաքվի նավահանգստից:

1.3. Համագործակցությունը ԳՈՒԱՄ-ի ձևաչափով: Ժողովրդավարության և տնտեսական զարգացման կազմակերպությունը (այսու-հետ՝ ԳՈՒԱՄ) Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հաստատած կազմակերպություն է, որի գործունեության հայեցակարգային տեսլականը նախապես հիմնված է եղել եվրասիական տրանսկովկասյան տրանսպորտային միջանցքի ստեղծմանը անդամ պետությունների համար: Սա հետագայում ընդլայնվեց 2007 թ. Բաքվի գագաթնաժողովի ժամանակ, երբ որոշում կայացվեց ընդլայնել ինտեգրման և անվտանգության միջավայրը ԳՈՒԱՄ երկրների համար: Այս գործոնն էլ իր հերթին ամբողջությամբ ընդգրկեց սոցիալ-տնտեսական, տրանսպորտային, էներգետիկայի, գիտատեխնիկական, հումանիտար, օրենսդրության ոլորտները: Կազմակերպության գործունեության առաջադրանքներից մեկը ԳՈՒԱՄ անդամ պետությունների տարածքում չլուծված հակամարտությունների հանգուցալուծման նպատակով ակտիվ համագործակցության ծավալումն է:

Էներգետիկայի, զբոսաշրջության, գիտատեխնիկական, տնտեսության և բիզնես միջավայրի բարելավման ոլորտներում համագործակցությունից զատ, անդամ պետությունները համագործակցում են թմրամիջոցների, ահաբեկչության, մարդկանց ապօրինի տեղափոխման (թրաֆիքինգի) ոլորտներում:

Կառույցի նախագահի պաշտոնը 2011 թ. դեկտեմբերին ստանձնեց Ադրբեջանը, որը նախաձեռնեց իր նախագահության ընթացքում գործունեության առաջնահերթությունները՝

ա) հակամարտությունների լուծում ԳՈՒԱՄ պետությունների տարածքներում.

բ) համագործակցություն իրավապաշտպանության ոլորտում (թմրամիջոցների մաքսանենգության, ահաբեկչության, մարդկանց առևտրի և ապօրինի միգրացիայի դեմ պայքար).

գ) համատեղ գործունեություն միջազգային կազմակերպություններում.

դ) համագործակցություն այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ (ԳՈՒԱՄ+ ձևաչափ).

---

[9] Տե՛ս http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_87593.htm?mode=pressrelease

է) միջխորհրդարանական համագործակցություն ԳՈՒԱՄ շրջանակում (ԳՈՒԱՄ-ի խորհրդարանական վեհաժողով).

զ) տնտեսության ոլորտում համատեղ գործունեության ծավալում և ԳՈՒԱՄ երկրների գործարար շրջանակների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում.

է) կապի, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցություն.

ը) ԳՈՒԱՄ երկրների համար տրանսպորտային միջանցքի զարգացում.

թ) համագործակցություն էներգետիկ անվտանգության և այլընտրանքային էներգիայի աղբյուրների ոլորտներում.

ժ) արտակարգ իրավիճակների տեղեկացման ոլորտում համագործակցության ծավալում.

ժա) համագործակցություն զբոսաշրջության ոլորտում.

ժբ) համագործակցություն գիտության, մասնավորապես նանոտեխնոլոգիաների ոլորտում[10]:

Արդեն 2012 թ. ապրիլին Ադրբեջանի նախագահությամբ Կիևում կայացավ թմրանյութերի ապօրինի շրջանառության և ահաբեկչության դեմ պայքարի աշխատանքային խմբի նիստը, որի ընթացքում տեղեկույթ փոխանակվեց ոլորտին վերաբերող ազգային օրենսդրությունների զարգացման, օպերատիվ իրավիճակի և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: Ձեռք բերվեցին որոշակի պայմանավորվածություններ «Նարկոստոպ-2012»-ի շրջանակում անդամ պետությունների իրավասու մարմինների միջև համատեղ միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ: Պատվիրակությունները համաձայնեցրին նաև կիբերահաբեկության դեմ պայքարի ուղղություններին վերաբերող հարցերը:

2. Երկկողմ առևտրային հարաբերությունները: *Երկրների միջև համագործակցության կարևորությունը և արտաքին քաղաքականության վեկտորների ուղղվածությունը որոշվում է նաև տվյալ երկրների միջև գոյություն ունեցող առևտրատնտեսական հարաբերությունների մակարդակով: Արդեն մի քանի տարի է, ինչ Ադրբեջանը, ըստ Վրաստանի վիճակագրական ծառայության տվյալների, Վրաստանի հիմնական առևտրային գործընկերն է: Արտահանումը Վրաստանից Ադրբեջան կազմել է 425.9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 610.7 մլն ԱՄՆ դոլար: 2012 թ. արտաքին ապրանքաշրջանառությունը Ադրբեջանի հետ հունվար-ապրիլ ամիսների համար կազմել է 382 մլն ԱՄՆ դոլար: 2011 թ. Վրաստանի և Ադրբեջանի միջև ապրանքաշրջանառության ծավալներն աճել են 36%-ով[11]:*

Ապրանքաշրջանառության ծավալների և երկկողմ տնտեսական կապերի զարգացման նպատակով գործում է միջկառավարական տնտեսական հանձնաժողով, որի ազգային մասերի նախագահները տվյալ երկրների

---

[10] *Տե՛ս http://1news.az/politics/20111213070924488.html*

[11] *Մանրամասն տեղեկատվության համար այցելեք Վրաստանի ազգային վիճակագրության պաշտոնական կայքէջը՝ www.geostat.ge*

վարչապետներն են: Միջկառավարական հանձնաժողովը հավաքվում է տարին մեկ:

Գրեթե յուրաքանչյուր տարի կազմակերպվում է վրաց-ադրբեջանական բիզնես համաժողով: Երկկողմ բիզնես համաժողովի ձևաչափը փոփոխվել է եռակողմի, որին մասնակցում է նաև Թուրքիան: Այս տարի կայացած բիզնես համաժողովի ընթացքում Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի էկոնոմիկայի նախարարները քննարկել են առևտրաարդյունաբերական հարաբերությունների զարգացման հարցերը: Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ բիզնես համաժողովին մասնակցեցին Ադրբեջանից և Թուրքիայից ժամանած 100 գործարարներ, ովքեր ակտիվ ներգրավված են գյուղատնտեսության, շինարարության, զբոսաշրջության, էներգետիկայի, անշարժ գույքի և դեղագործության ոլորտներում:

Այս տարի հունիսին Կարսում կայացած բիզնես համաժողովին մասնակցեցին մինչև 300 գործարարներ, ովքեր քննարկեցին առևտրային հարաբերությունների խորացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը վերաբերող հարցեր: Կարսն ընտրվել է խորհրդանշական ձևով, քանի որ մի քանի ամիս հետո կգործարկվի Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղին:

Աճում են Ադրբեջանի ուղղակի ներդրումները Վրաստանի տնտեսությունում: Եթե ԱՊՀ պետությունների ընդհանուր ներդրումները Վրաստանի տնտեսությունում կազմել են 119696.3 հազ., ապա միայն Ադրբեջանի ներդրումները՝ 44.763.7 հազ. ԱՄՆ դոլար:

Վրաստանում գրանցված են 272 ադրբեջանական ընկերություններ, որոնց միջոցով բացվել է 7000 աշխատատեղ, իսկ Ադրբեջանում գործում են վրացական կապիտալով 106 ընկերություններ:

Վրաստանի և Ադրբեջանի միջև առևտրատնտեսական հարաբերությունների հեռանկարային ուղղություններից մեկը զբոսաշրջության ոլորտում համագործակցությունն է: 2009 թ. երկու երկրների մասնակցությամբ կայացավ Կովկասյան ճանապարհորդությունների տոնավաճառը, 2010 թ. վրացական կողմը մասնակցեց Բաքվում կազմակերպված միջազգային ճանապարհորդական տոնավաճառին: Նույն թվականին երկու երկրների ճանապարհորդական գործակալությունները մասնակցեցին Տոկիոյում կայացած Միջազգային ճանապարհորդական ցուցահանդեսին՝ ներկայացնելով «ԳՈՒԱՄ–Զբոսաշրջություն» զբոսաշրջային արտադրանքը: Մասնակցությունը տրամադրվեց ԳՈՒԱՄ–Ճապոնիա համագործակցության համատեքստում:

Զբոսաշրջության ոլորտում համագործակցությունը զարգացնելու նպատակով Վրաստանը, ի դեմս էկոնոմիկայի նախարարության, առանձնահատուկ պայմաններով առաջարկություններ է ներկայացրել Ադրբեջանին, համաձայն որի՝ ադրբեջանական ներդրողները 15 տարով ազատվում են հարկերից, և նրանց անվճար հող է տրամադրվում: Վրացական կողմը ստանձնում է նաև հաղորդակ- ցության և ենթակառուցվածքների

կառուցման աշխատանքները[12]*: Վրաստանի պաշտոնատար անձինք բազմիցս հայտարարել են, որ Վրաստան այցելած 2 մլն զբոսաշրջիկներից 500 հազարը Ադրբեջանից են: Վրաստանն առաջարկել է նաև օտարերկրյա այցելուների համար ստեղծել համակցված զբոսաշրջային փաթեթներ:*

Զարգանում է երկու երկրների միջև համագործակցությունը նաև բանկային համակարգում:

Ադրբեջանի օտարերկրյա աշխատուժի հիմնական մատակարարները Վրաստանը և Թուրքիան են (մոտ 1500 վրացի աշխատում է Ադրբեջանում):

3. Էներգետիկ համալիր: *Իր աշխարհաքաղաքական դիրքի շնորհիվ Կասպից ծովի էներգակիրների արտահանման համար Հարավային Կովկասը հիմնական տարանցիկ միջանցքն է դեպի արևմտյան սպառման շուկաներ: Երկու պետությունների ազգային շահերը, դրանց շուրջ ստեղծված իրականությունը, հետաքրքրությունն- ռի բազմակողմանիությունը և հետապնդվող խնդիրները ստեղծե-ցին ինտեգրված համալիր, որի շնորհիվ այս պետություններն իրականացրին էներգակիրների տեղափոխման երեք նախագիծ՝ (i) Բաքու–Սուսպա, (ii) Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղերը և (iii) Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարը: Այս ծրագրերը ոչ միայն արդյունավետորեն միմյանց կապեցին Վրաստանը և Ադրբեջանը, այլև Թուրքիան, որի միջոցով դուրս եկան արևմտյան շուկա: Ի լրումն նշված ծրագրերի՝ կողմերը նախաձեռնեցին նաև Ադրբեջան–Վրաստան–Ռումինիա գազատարի նախագիծը, որին հետագայում, համաձայն տարածված հաղորդագրությունների, միացավ նաև Հունգարիան: Յուրաքանչյուր պետության մասնաբաժինը ծրագրում կազմեց 25%:*

Որոշ վերլուծաբանների և պաշտոնյաների կարծիքով ծրագրերը միտված են ամբողջ ներուժով Վրաստան–Ադրբեջան տարանցիկ միջանցքի հնարավորությունների օգտագործման և տարածաշրջանում կայունության ապահովման գործում մեծ ներդրում դառնալուն:

Խողովակաշարերի կառուցումը Վրաստանի և Ադրբեջանի համար, տնտեսականից բացի, ունի նաև քաղաքական նշանակություն: Այս երկու երկրները փորձում են վերադասավորել պատկերացումները տարածաշրջանի նկատմամբ և փաստում են, որ իրենց ապագան տեսնում են Եվրոպայի հետ՝ գազատարի կառուցումը համարելով լուրջ քայլ դեպի եվրոատլանտյան տարածաշրջանի հետ ինտեգրումը: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ այս ծրագրերի միջոցով ստեղծվեց Ադրբեջան–Վրաստան և Վրաստան–Թուրքիա ռազմավարական գործընկերությունը, քանի որ այս երեք երկրները ստիպված էին համագործակցել բոլոր մակարդակներով: Վերջինս էլ իր հերթին զարգացրեց ընդհանուր ճակատագիր ունենալու գաղափարը և խթանեց ցանցերի, մեխանիզմների և ենթակառուցվածքների կառուցումը:

---

[12] *Տե՛ս* http://en.trend.az/capital/business/1866801.html

Ադրբեջանն իրեն տեսնում և ներկայացնում է որպես Եվրոպայի և տարածաշրջանի էներգետիկ անվտանգության երաշխիք ու գործընկեր[13]: Վրաստանի բարձրաստիճան պաշտոնյաներն այս կապակցությամբ միշտ նշել են, թե որքան կենսական նշանակություն ուներ իրենց համար ադրբեջանական գազը, երբ ռուսական «Գազպրոմ» ընկերությունը որոշեց դադարացնել գազամատակարարումը Վրաստանին 2006-2007 թթ. ձմռան ամիսներին:

Ադրբեջանի էներգետիկ քաղաքականության վեկտորն ուղղված է նաև Ռուսաստանի դեմ, որը շահավետ է նաև Վրաստանի համար: Խողովակաշարերի կառուցումով այս երկրները կոտրում են այն կարծրատիպը, թե Ռուսաստանը գերիշխող դիրք է զբաղեցնում (համենայն դեպս էներգետիկ ոլորտում) տարածաշրջանում, իսկ այս երկու պետությունները ներկայանում են որպես անկախ և ինքնիշխան դերակատարներ: Որպես ապացույց կարող է ծառայել նաև այն փաստը, որ Վրաստանը պլանավորել էր վաճառել Հյուսիս–Հարավ գազատարի իր հատվածը, որով ռուսական գազը մատակարարվում է Հայաստանին: Դրա համար վրացական կողմը նաև փոփոխություն կատարեց իր ազգային օրենսդրությունում, համաձայն որի գազատարը հանվեց ռազմավարական նշանակություն ունեցող և պետական սեփականություն համարվող օբյեկտների ցանկից: Հնարավոր գնորդների ցանկում էին ռուսական «Գազպրոմ» և ադրբեջանական «ՍՈԿԱՐ» ընկերությունները[14] :

Ադրբեջանի էներգետիկ քաղաքականության կարևոր սեգմենտ է Ադրբեջանի նավթային ընկերությունը՝ «ՍՈԿԱՐ»-ը, որը լավագույնս ներկայացված է Վրաստանի ոչ միայն էներգետիկ համալիրում, այլև տնտեսությունում: Այս էներգետիկ ընկերությունը Կուլևիի նավթային տերմինալի, 85 բենզալցակայանների, Վրաստանի 29 շրջաններում տեղակայված գազաբաշխիչ կայանների սեփականատերն է: «ՍՈԿԱՐ»-ին է պատկանում Վրաստանի բենզինի և դիզելային վառելիքի շուկաների համապատասխանաբար 72%-ը և 61 %-ը: «ՍՈԿԱՐ»-ը Վրաստանի համար 1 հարկատուն է: Միայն «ՍՈԿԱՐ Ջորջիա Պետրոլեում» ընկերությունը Վրաստանի պետական բյուջե մուծել է 88400000 վրացական լարի գումար (54.171. 265.92 ԱՄՆ դոլար), իսկ ընդհանուր ներդրումները կազմել են 400 մլն ԱՄՆ դոլար:

4. Տրանսպորտ: *Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը ստիպեց Ադրբեջանին փնտրել նոր՝ այլընտրանքային հաղորդակցության ուղիներ, որի վերաբերյալ առաջին քննարկումը կայացավ 1993 թ. հուլիսին և կապված էր Կարս–Գյումրի–Թբիլիսի երկաթուղային գծի փակման հետ: 2007 թ. Թբիլիսիում Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև ստորագրվեց եռակողմ համաձայնագիր*

---

[13] *Տե՛ս Europe's Energy Security: Gazprom's Dominance and Caspian Supply Alternatives, Editors - Svante E. Cornell and Niklas Nilsson, 2008. p 115.*

[14] *Տե՛ս Swiss Federal Institute of Technology Zurich, Center for Security Studies, Caucasus Analytical Digest, Oil and Gas pipelines in the South Caucasus, N 3, 2011.*

երկաթգծի կառուց-ման մասին, համաձայն որի՝ ծրագիրը նախատեսվում էր ավարտել 2010 թ., սակայն վրաց-օսական պատերազմի և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրների պատճառով ծրագրի ավարտը հետաձգվեց մինչև 2012 թվականը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 600 մլն ԱՄՆ դոլարից ավելի գումար, որից 200 միլիոնը Ադրբեջանը վարկի տեսքով տրամադրել է Վրաստանին իր մասի ծախսերը կատարելու նպատակով: Վարկը տրամադրվել է տարեկան 1 տոկոսադրույքով և 25 տարի ժամկետով:

Այս ծրագիրը, տնտեսականից զատ, ունի նաև քաղաքական ենթատեքստ, քանի որ ադրբեջանցի պաշտոնյաների բնութագրմամբ, այն վերակենդանացնում է «Մետաքսի ճանապարհը», նպաստում Եվրոպա–Կովկաս–Ասիա տրանսպորտային միջանցքի զարգացմանը՝ դրանով իսկ խթանելով տարածաշրջանի ինտեգրմանը եվրոպական ընտանիք: Որոշ մասնագետների կարծիքով Ախալքալաք–Կարս 98-կիլոմետրանոց երկաթուղային հատվածն այն բացակայող օղակն է, որի միջոցով հնարավոր կլինի կապել Արևելք–Արևմուտք երկաթուղային միջանցքը Շանհայից մինչև Լոնդոն և դառնալ ամենակարճ ճանապարհը եվրասիական մայրցամաքում[15]: Սակայն քաղաքական շահաբաժինները նշվածով չեն սահմանափակվում: Բացի այն, որ այս ծրագրով Բաքուն մեկուսացնում և շրջանցում է Հայաստանը, այն նաև ուղղակի երկաթուղային կապ է հաստատում իր վաղեմի դաշնակից Թուրքիայի հետ: Ավարտին է հասցվում նաև Ադրբեջանի վերջնանպատակը, այն է՝ ունենալ ռուսական ազդեցությունից դուրս այլընտրանքային ճանապարհ, որի միջոցով հնարավոր կլինի բարձրացնել Բաքվի կասպյան նավահանգստի և Ադրբեջանի պետական երկաթուղու շահութաբերությունը: Փորձագետների կանխատեսմամբ նախնական փուլում երկաթգիծը կտեղափոխի մեկ մլն ուղևոր և 6.5 մլն տոննա ուղեբեռ, որի ծավալները մինչև 2030 թ. կհասնեն երեք միլիոն ուղևորի և 17 մլն տոննա ուղեբեռի: Ադրբեջանի հաշվարկներով երկաթգիծը տարեկան կբերի 50 մլն ԱՄՆ դոլարի եկամուտ[16]:

Ուշադրության արժանի է նաև կողմերի համագործակցությունը ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակում: Երկու պետությունները այդ կազմակերպության անդամ են (Հայաստանը նույնպես այդ կազմակերպության անդամ է), և անցյալ տարվանից քննարկում են Վրաստան–Ադրբեջան–Կենտրոնական Ասիա տրանսպորտային միջանցքի հետ կապված հարցեր, որը հնարավորություն կտա սնծովյան նավահանգիստներից բեռնարկղերը տեղափոխելու Ադրբեջանի կասպյան նավահանգիստներ, այնուհետև՝ Կենտրոնական Ասիա: Այս կազմակերպության ներկայիս անդամներն են Ադրբեջանը, Բուլղարիան, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Հայաստանը, Մոլդովան, Ռումինիան, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Թուրքիան, Ուկրաինան, Իրանը:

---

[15] *Տե՛ս The Baku-Tbilisi-Kars Railroad and its Geopolitical Implications for the South Caucasus, Samuel Lussac, 2008.*

[16] *Տե՛ս http://www.railway-technology.com/projects/baku-tbilisi-kars/*

О ДВУСТОРОННИХ ОТНОШЕНИЯХ МЕЖДУ АЗЕРБАЙДЖАНОМ И ГРУЗИЕЙ

АРАКЕЛЯН А. С.

Резюме

Внешняя политика Азербайджана и Грузии в основном соответствует национальным интересам этих государств. Эти отношения носят прагматичный характер и с политической точки зрения направлены на создание в регионе “триумвирата” (Азербайджан, Грузия и Турция).

Целью проектов, реализуемых в регионе, является ослабление позиции России и ее союзников в регионе. Помимо этого эти проекты призваны показать странам, вошедшим в евро-атлантический блок, что Азербайджан и Грузия проводят независимый внешнеполитический курс, что созвучно политике Запада.

Внешняя политика Баку в отношении НАТО основана на прагматизме, и членство этой страны в организации “Движение неприсоединения” в своем роде является выражением недовольства альянсом. Однако последнее не означает, что Азербайджан полностью отказывается от членства в этой организации и в случае вывода объединенных войск НАТО из Афганистана в 2014 г. роль Азербайджана как транзитной страны возрастет.

Азербайджан и Грузия однозначно воспользуются любой платформой, будь то НАТО или ГУАМ, для обсуждения вопросов территориальной целостности и принятия осуждающих резолюций в отношении “иностранных агрессоров”.

Если Грузия ведет откровенную прозападную внешнюю политику, то Азербайджан старается сохранить равновесие между своими национальными интересами и интересами вовлеченных в региональную политику сторон. Такая осторожная позиция обусловлена тем фактом, что после принятия западных экономических предложений Запад может предъявить также требования по проведению политических реформ.